



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 6/3

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Ք.Երևան
Ժ.11.00

23 նոյեմբերի 2011թ.

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 44 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Կ. Արեյանը, Վ. Առաքելյանը, Վ. Վարդանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Վ. Ստեփանյանը, քաղաքապետի մամլո քարտուղար Շ. Սարդարյանը, աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը, ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը կազմակերպական վարչության պետ Գ. Բաղդասարյանը, բնապահպանության վարչության Ա. Մարտիրոսյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը, զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Է.Ներսիսյանը, տրանսպորտի վարչության պետ Հ. Նավասարդյանը, արտաքին կապերի վարչության պետ Դ. Գևորգյանը, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Ա.Գևորգյանը:

Նիստին ներկա էին ՀՀ ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N55-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:
3. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ա.Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը /կցակառույցը/ նվիրելու և Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի N252-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:
5. Երևան քաղաքում տեղական տուրքերի և վճարների 2012 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
6. Գույք ընդունելու մասին:
7. Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին:
8. Գույքը նվիրաբերելու մասին:
9. Երևանի քաղաքապետի 2011 թվականի նոյեմբերի 7-ի N5323-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:
10. Երևանի և Փարիզի քաղաքապետարանների միջև բարեկամության և համագործակցության համաձայնագիրը հաստատելու մասին:
11. Երևանի քաղաքապետի 2011 թվականի հոկտեմբերի 12-ի N4733-Ա որոշումը հաստատելու մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - Օրակարգի հաստատման մասին:

ՈՐՈՇՎԵՑ-Հաստատել Երևանի ավագանու վեցերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 44
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

2. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N55-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

ՈՐՈՇՎԵՑ- Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ N55-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 35-րդ կետի 1-ին ենթակետի թ) պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

.թ. հանքային իրավունք ունեցող անձանց տրամադրված լեռնահատկացման ակտի սահմաններում գտնվող հողամասերի համար՝ 3 տոկոս, բացառությամբ Ծրագրի 35-րդ կետի 1-ին ենթակետի ժ) պարբերությանն:

2) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 35-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ ժ) պարբերությամբ.

.ժ. ընդերքի օգտագործման իրավունք ունեցող և այն շահագործող անձանց լիցենզային (կոնցեսիոն) պայմանագրով տրամադրված ընդերքի տեղամասերի զբաղեցրած հողամասերի համար՝ 7 տոկոս:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 44
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3. ԼՍԵՑԻՆ – Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ա.Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը /կցակառույցը/ նվիրելու և Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի N252-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

ՈՐՈՇՎԵՑ-1.Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 20.05.2008թ. հ.2518602 վկայական) Ա.Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքի կցակառույցը նվիրել Ա.Տիգրանյան փողոցի հ.38 շենքի հ.3 բնակարանի (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 22.08.2011թ. հ.2844885 վկայական) սեփականատեր Արթուր Ենգիբարյանին՝ իր կողմից օգտագործվող մակերեսին համապատասխան:

2.Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ա.Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը (կցակառույցը) նվիրելու մասին N252-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հավելվածի 7-րդ կետի 3-րդ սյունակից հանել .Սեղրակ Բրոյանե բառերը,

2) Հավելվածի 7-րդ կետի 4-րդ սյունակում ,26.12.2005թ. հ.2090978ե թվերը փոխարինել ,28.09.2011թ. հ.2845463ե թվերով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ –44
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

4. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

ՈՐՈՇՎԵՑ- 1.Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի ,Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին N169-Ն որոշմամբ հաստատված.

1) Եկամուտների գումարը նվազեցնել 97,067.6 հազ. դրամով,

2) ծախսերի գումարը նվազեցնել 97,067.6 հազ. դրամով:

2.Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի ,Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին N169-Ն որոշմամբ հաստատված NN1,2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN1-5 հավելվածների:

3.Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 2011 թվականին մինչև 12,950.0 հազար դրամ հատկացնել Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակին ,Գեղեցիկ Երևանե ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի վարչական շրջաններում շենքերի շքամուտքերի վերանորոգման աշխատանքների համար բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ,Կապիտալ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին հողվածով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ –44
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

5.ԼՍԵՑԻՆ–Երևան քաղաքում տեղական տուրքերի և վճարների 2012 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների գանձման և հաշվառման վարչության պետ Ժ/պ Մ.Մկրտչյանը:

ՈՐՈՇՎԵՑ-1.Սահմանել Երևան քաղաքում տեղական տուրքերի և վճարների 2012 թվականի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 75.000 դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

գ. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 150.000 դրամ,

դ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 250.000 դրամ,

ե. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 350.000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

զ. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ.

է. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 դրամ:

2) Երևան քաղաքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրքը սահմանվում է՝ 15.000 դրամ.

բ. բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի "ա" պարբերությամբ սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն որոշման իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը:

3) Երևան քաղաքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 25.000 դրամ:

4) Երևան քաղաքի վարչական տարածքում ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ գոտիավորման, տեղական տուրքը սահմանվում է՝ համաձայն N1 հավելվածի (4-րդ գոտում ընդգրկվում են N1 հավելվածում չներառված փողոցներն ու տարածքները):

5) Երևան քաղաքի վարչական տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ գոտիավորման, տեղական տուրքը սահմանվում է՝ համաձայն N 2 հավելվածի ,

(4-րդ գոտում ընդգրկվում են N2 հավելվածում չներառված փողոցներն ու տարածքները):

6) Երևան քաղաքի վարչական տարածքում՝

ա. բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 500 դրամ.

բ. հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 350. 000 դրամ:

7) Երևան քաղաքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի համար՝ յուրաքանչյուր տարվա թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 50.000 դրամ:

8) Երևան քաղաքի վարչական տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի,

շահումով խաղերի եւ վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 87.500 դրամ.

բ. հանրային սննդի եւ զվարճանքի օբյեկտների համար՝ 175.000 դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 875.000 դրամ.

դ. խաղատների կազմակերպման համար՝ 1.750.000 դրամ.

ե. շահումով խաղերի կազմակերպման համար՝ 875.000 դրամ.

զ. վիճակախաղերի կազմակերպման համար՝ 262.000 դրամ:

9) Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի վարչական տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5000 դրամ:

10) Երևան քաղաքի վարչական տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը, ըստ գոտիավորման, սահմանվում է՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝

- Աջափնյակ, Ավան, Գավթաշեն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքում՝ 2500 դրամ.

- Նոր Նորք վարչական շրջանի տարածքում՝ 2500 դրամ.

- (Մյասնիկյան պող.- 3500դրամ)

- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում՝ 3000 դրամ.

- (Իսակովի պող.,Էջմիածնի խճ.,Զվարթնոց օդանավակայան-3500դրամ)

- Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների տարածքում՝ 3500 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 եւ ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝

- Աջափնյակ, Ավան, Գավթաշեն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Նուբարաշեն,

- Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքում՝ 3500 դրամ.

- Նոր Նորք վարչական շրջանի տարածքում՝ 3500 դրամ.

- (Մյասնիկյան պող.- 6125դրամ)

- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում՝ 3500 դրամ.

- (Իսակովի պող.,Էջմիածնի խճ.,Զվարթնոց օդանավակայան-6125դրամ)

- Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների տարածքում՝ 6125 դրամ.

գ. այլ արտաքին գովազդի համար՝

- Աջափնյակ, Ավան, Գավթաշեն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքում՝ 2000 դրամ.

- Նոր Նորք վարչական շրջանի տարածքում՝ 2000 դրամ.

- (Մյասնիկյան պող.- 2625դրամ)

- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում՝ 2200 դրամ.

- (Իսակովի պող.,Էջմիածնի խճ.,Զվարթնոց օդանավակայան-2625դրամ)

- Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների տարածքում՝ 2625 դրամ.

դ. դատարկ գովազդային վահանակների համար՝ 1225 դրամ.

11) Երևան քաղաքի արխիվից փաստաթղթերի պատճեններ եւ կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

12) Երևան քաղաքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 10.000 դրամ:

13) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական վճարը սահմանվում է՝

ա. մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր կառուցապատման մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.

բ. 100-ից 500 քառակուսի մետր ընդհանուր կառուցապատման մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000 դրամ.

գ. 500-ից 1500 քառակուսի մետր ընդհանուր կառուցապատման մակերես ունեցող օբյեկտների համար՝ 200000 դրամ.

դ. 1500 քառակուսի մետր և ավելի ընդհանուր կառուցապատման մակերես ունեցող օբյեկտների համար՝ 300000 դրամ.

14) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական վճարը սահմանվում է՝

ա. մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝ յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար՝ 500 դրամ.

բ. 501-ից-1.500 քառակուսի մետր մակերես ունեցող հողամասի համար 250.000 դրամ գումարած 500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 250 դրամ: 1.500 քառակուսի մետրից ավելի մակերես ունեցող հողամասերի համար 500.000 դրամ գումարած 1.500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 50 դրամ:

15) Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար տեղական վճարը սահմանվում է՝ յուրաքանչյուր մասնակցից 10.000 դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 44
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

6. ԼՍԵՑԻՆ– Գույք ընդունելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ– Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

ՈՐՈՇՎԵՑ– 1. Որպես նվիրատվություն ընդունել՝

1.1. Անդրանիկ Խալոյանի կողմից Երևան քաղաքի Երկրորդ Եկմայյան փողոց հ.5 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքի 2-րդ հարկի 52.0 քմ մակերեսով երկու սենյականոց բնակարանը:

1.2. Շայ և Արաբ ժողովրդների երախտիքի ու բարեկամությանն հուշարձանը:

2. Ֆրանս Տելեկոմե փակ բաժնետիրական ընկերությունից որպես նվիրաբերություն ընդունել ֆրանսիացի քանդակագործ Օգյուստ Ռոդենի հեղինակած Ժյուլ Բաստիեն Լեպաժի բրոնզյա արձանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 44
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

7. ԼՍԵՑԻՆ– Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ– Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Է. Ներսիսյանը:

ՈՐՈՇՎԵՑ– 1. Որպես նվիրատվություն ընդունել Երևան քաղաքի արձանների և հուշարձանների, ճարտարապետական արժեք ներկայացնող շենք-շինությունների, կամուրջների գեղարվեստական լուսավորման համար օգտագործված մի շարք կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող գույքը, համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 44
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

8. ԼՍԵՑԻՆ- Գույքը նվիրաբերելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետ Ա.Մարտիրոսյանը:

ՈՐՈՇՎԵՑ-1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող սույն որոշման հավելվածում նշված 10 հատ խոտհնձիչ նվիրաբերել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտի քաղաքապետարանին՝ կանաչ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքներն արդյունավետ իրականացնելու նպատակով:

2.Առաջարկել Երևանի քաղաքապետին Ստեփանակերտի քաղաքապետարանի հետ կնքել նվիրաբերության պայմանագիր:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ –44
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

9. ԼՍԵՑԻՆ–Երևանի քաղաքապետի 2011 թվականի նոյեմբերի 7-ի N5323-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հ.Նավասարդյանը:

ՈՐՈՇՎԵՑ-Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011թ. նոյեմբերի 7-ի ,Երևանի քաղաքապետի 2010 թվականի մարտի 3-ի N983-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին N5323-Ա որոշմանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ -44
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

10. ԼՍԵՑԻՆ–Երևանի և Փարիզի քաղաքապետարանների միջև բարեկամության և համագործակցության համաձայնագիրը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դ.Գևորգյանը:

ՈՐՈՇՎԵՑ-Հաստատել 2011թ. հոկտեմբերի 25-ին Երևան քաղաքում ստորագրված Երևանի և Փարիզի քաղաքապետարանների միջև բարեկամության և համագործակցության համաձայնագիրը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ –44
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

11. ԼՍԵՑԻՆ– Երևանի քաղաքապետի 2011 թվականի հոկտեմբերի 12-ի N4733-Ա որոշումը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Յու.Մամիկոնյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ-Երևանի ավագանու ,Բարգավաճ Հայաստանե խմբակցության անդամ Պողոս Փլավյանը:

ՈՐՈՇՎԵՑ- Հաստատել Երևանի քաղաքապետի 2011 թվականի հոկտեմբերի 12-ի ,Երևանի սպորտ կոմիտեե համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու մասին N 4733-Ա որոշումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 44
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանն առաջարկեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2011 թվականի դեկտեմբերի 23-ին, ժամը 11.00-ին:
Առաջարկն ընդունվեց միաձայն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Արձանագրեց՝
Ն. Ղուկասյանը